

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

«ՄՈՒՐՃ»-ի ՆԵՐԿԱՅ ՀԱՄԱՐԻ լուս ընծակելը մենք ուշացրինք նորա համար որ զետեղենք «Մի ընկերութեան սկիզբն ու վախճանը» խորագրով չօդւածը, որը սկզբում չէր մտնում սուն համարի ծրագրի մէջ. իսկ այդ չօդւածի հրատարակութիւնը բարուակն պարտաւորութիւն էր մեզ համար այն գալթակղեցուցիչ նամակներից չետու, որ մի ժամանակ «Մուրճ»-ի հրատարակիչ անունը կրող պ. Փ. Վարդապարեանցը տպեց «Մշակ» լրագրի փետրւարի 15-ի և 26-ի համարներում (№№ 18 և 23), Այդ նամակներում մեր նախկին նոտարական ընկերը, առիթ բռն-նելով «Մուրճ»-ի անցեալ № 1-ում տպած մեր առաջնորդող չօդւածի ան մի քանի տողերը, ուր մեր նոտարական պայմանի լուծելու մասին վիշտակութիւն է արւած և ուր մենք բախտնում էինք թէ «Մուրճ»-ը այլ նու ուրիշ ապահովութիւն չունի քան ինչ մեզ կը տաէ բաժանորդագրութիւնը, առիթ բռնելով այդ տողերը, առում ենք, նա իւր առաջն նամակում պնդեց թէ մեզնից պայմանը քանդելու համաձայնութիւն ստանալու համար՝ իւր թէ նա մեզ «լիուլի բաւականութիւն (ուղում է ասել բաւարարութիւն) է տևել նաև 1894 թւականի համար», Գորանով պարզ ակնարկում էր այն թէ մեր պայմանի քանդելը այն ձև է եղած, որով իւր թէ «Մուրճ»-ը 1894 թւականի դեֆիցիտից ապահոված է մեր նախկին նոտարական ընկերոջ երաշխատրութեամբ կամ կանխիկ տւած գումարով Որովհետև ալդպիսի բան չէր եղած, մենք «Մշակ» № 19-ում բաւականացանք զգուշացնելով հասարակութիւնը ադրպիսի եղ բակացութիւնից, ուշք անգամ չդարձնելով պ. Վարդապարեանցի նամակում առաջ բերած ուրիշ՝ գորանից ոչ պակաս վիրատրական տողերի վրակ Բայց նախկին նոտարական ընկերս դորանով էլ չբաւականացաւ. նա տպեց մի երկրորդ նամակ, ուր, չկարոնալով հերքել մեր ասածը «Մուրճ»-ի անապահովութեան մասին, սկսեց շշափել մեր բաժանման ակտի այլ կե-

տերը, որոնք վերաբերութիւն չունէին մեզ հետաքրքրող ինդրին, Բայց այդ երկու նամակներում արդէն մեզ վերաբերող խառն ի խորոշ աճնքան ակնարկներ կավճ արւած և իրողութիւններն էլ աճնպիսի լուսով էին դուրս բերւած, որ այլ ևս մենք մեր լուսութիւնը պէտք է մի կողմ թողնէինք՝ խօսելու համար մի թշուամի մարդու հետ, որը մամուլի մէջ ուղղում է խաղեր խաղալ մեր ամսագրի հետ, Մի երկրորդ նամակով «Մշակի» խմբագրութեանը, որ տպւեց այդ լրագրի № 25 ում, մենք չախտնեցինք Վարդապարեանցի բանակուի խաղաին բնաւորութիւնը, խոստանալով այդ մասին մանրամասն խօսել «Մուրճ» ում, ուր ընթերցողները կը գտնեն նաև պատասխան այ Վարդապարեանցի կողմից աճնքան վատահ կերպով չօշակիած հարցերին.

«ՄՈՒՐՃ» ՆԻՒՐՈՂՆԵՐԻ (Տես սկիզբը № 1). Աստրախանից պ. Յովհաննէս կիտակեան ցը, շնորհաւորելով «Մուրճ»-ի հնգամեակ տարեցրջանի լրանալը, իւր բաժանորդագրութիւնից դուրս ուղարկել է մեզ 50 ոռութիւն, «Մուրճ»-ի 5 օրինակը ուղարկելու համար կամ իւր առաջարկած տեղերը և կամ ըստ մեր բարեհավեցողութեան Համաձայն իւր առաջարկութեան մենք ուղարկեցինք՝ Առաջ ախան հայոց օրինորդական դպրոցին, Պարի գ՝ հայոց մատենադարանին, Ժը նեւ Հայոց ուսանողական գրադարանին, իսկ մեր ընտրութեամբ՝ Եը և ան-Նոր. Բալագէքեան հետեակ գնդին պ. Ա. Յովսէփինանցի հասցէով և Հին-Նախի իշխան—տեղական հայ ուսումնարանին (քանի որ նւիրաբերողի մատնանիշ արած չորրորդ և հինգերորդը արդէն ստանում են իրանց հաշով):

Նույսուց եղի, Յովհաննէս իւր Բունիաթեաններ, բացի մի օրինակ Զաքաթալի ուսումնարանի համար, որ ըլշատակիւ ենք անցեալ № 1-ում, նւիրում են նաև մի օրինակ Գողթանի Ցուցով գիւղի ուսումնարանին.

Նուշուց պ. Վահան Մելիք-Բաբա խաննեանց նվիրում է մի օրինակ «Մուրճ» Նուշուակ հայ օրինորդաց Մարիամեան գպրոցին:

Նուշուց մեր աշխատակից պ. Գէորգ Դարաջեան մի օրինակ «Մուրճ» թողնում է մեր կարգադրութեանը ներքով. մենք աճն ուղարկում ենք Զահրի գիւղի ուսումնարանին (Հին-Նախի մատնանիշ գաւառ):

Պր. Ա. Տ-Զ., Բալախանից, ուղարկելով մեզ 5 ոռութիւն, ինդիրում է մեզ լատկացնել այդ գումարը ի հաշիւ «Մուրճ»-ի

այն մի օրինակի, որ խմբագրութիւնը կ'ուզենաչ ձրի ուղարկել որ և է հիմնարկութեան։ Մենք ազդ օրինակը հատկացրինք թիֆլիսի աշաբուժարանին (Глазная лечебница, Болыш. Водовозн. ул., д. Товарищ. апт. товарами), որից խնդրաւած էինք ԳէՈՐԳ եպիսկ. ՍՈՒՐԵՆԵԱՆՑ հաստատւած է Վրաստանի և Խմերէթիացի հայոց թեմի առաջնորդ։

ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻ ԶԵՌՆԱԴԻՌՈՒԹԻՒՆՆ. ՎԵՀԱՓառ Կաթողիկոսի հրամանով Սեղրակեան սրբազն Արիստակէս եպիսկոպոսի ձեռքով ձեռնադրւել են վարդապետ ցաջմ աբեղակ Արսէն Ղլտճեան, Բագրատ Թաւաքալեան և Գէորգ Ռշտունի։

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ տեղի ունեցաւ փետրւարի 10-ին քաղաքային խորհրդարանի դահլիճում, մասնակցութեամբ մոտ 50 հոգու. Հաստատւեցին կինտրոնի և 17 ճիւղերի նախահաշիւները (2 ճիւղ՝ Արդահանի և Արտինի գեռ չին հասցրել իրանց նախահաշիւները). Կենտրոնի (Թիֆլիս) մուտք ըստ նախահաշիւ սպասում է 12,668 ռ. 75 կ., եւլք՝ 12,343 ռ. 20 կոպ., որի մէջ 3370 ռ. լատկացրած է նոր բացւելիք զրադարան-ընթերցարանին և 3000 ռ. ուսուցչական ցէնզ ձեռք բերելու գործին. Կենտրոնի և 17 ճիւղերի մուտքը, միասին սպասում է 34,432 ռ. 66 կ., ծախս՝ 35,107 ռ. 11 կ.. Նկատելու է որ Վաղարշապատի ճիւղը իւր ծախքի մէջ լատկացրել է մի գրւմար շնորհապահական կազման հիմնելու և պահպանելու համար։

Ապա ժողովը զբաղւեց այն առաջարկով որ գրաւոր կերպով արել էին խորհրդի 15 անդամներ՝ Երևանի նահանգում և Կարսի շրջանում հացի անդերինութիւնից հացի կարօտութեան մէջ ընկածներին օգնելու համար, Խորհրդի առաջարկով վճռւեց որ Խորհուրդը ընդունի նւէրներ և տեղ հասցնի. Այդ նպատակով խորհուրդը արդէն ստացել էր 711 ռ. և, բացի այդ՝ 50 պուդ ցորեն։

Դորանից կտոր կատարւեցին ընտրութիւններ՝ իրանց ժամանակը լրացրած պաշտօնատար անձերի. Գաղտնի քէշարկութեամբ ընտրւեցին նախագահ ընդհանուր ժողովների բժշկ. Բագրատ Նաւասարդեանց (33 սպիտակ և 10 սե), քարտուղար ընդհանուր ժողովների Խաչ. Մալումեան (34 սպ. 9 սե), անդամներ խորհրդի՝ Ալեքսանդր Մանթաշեան (44 սպիտակ և ոչ մի սե, վերընտրւած), Ալեքսանդր Մելիք-Ազարեան (39 սպ. և 4 սե, վերընտրւած), բժշկ. Վահան Արծրունի, ինժենէր Մկրտ. Կարապետեան և Ստ. Սուլիմաննեան (աւելի պակաս ձախներով,

վերջինս 30 ձափնով). վոխանդամութեան համար ընտրեց միայն պ. Տիգրան Նազարեան, Յալտինի է որ ամեն արդի Խորհրդից դուրս է գալիս անդամների թւի կէսը միայն, Մնացողներն են՝ պ. պ. Ալ. Անանեան, Պ. Մելիք-Ղարապօղեան, Յովհ. Սպենդիրեան և Ներսէս Աթաբէգեան,

ու այի այլ, նոյն ժողովում կազմւեց Գրադարանի համար յանձնաժողով հինգ հոգուց բաղկացած, ընտրեցին Պշա. Սոֆիա Արդութեան, պ. պ. Ստ. Մալխասեանց, Ամա. Բալաղեան, Շիրվանզադէ, Յակոբ Քոչարեան:

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՑԵՆԶ ՃԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ, ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՄԱԳԵԿ Է Բ Ա Ջ Հ Ի Մ Ա Ր Դ Ա Մ Ի Ր Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո ւ Թ Ե Ա Ն ԽՈՐՀՐԴԻՑ ՀԵՏԱԵԵԱԼ ԳՐՈՒԹԻՒՆԸ «ՄՈՐԾ»-ՈՒՄ ՏԱՊԱԳՐԵԼՈՒ ԽԸՆ-ԳԻՐՔՊՈՎ.

«Բաքւակ Մարդասիրական Ընկերութեան ընդհանուր ժո-ղովը ներկաէ 1894 թ. համար նշանակել է 1000 ռուբլի նպաստ այն անձանց, որոնք կը կամենան մի տարւաչ ընթացքում վերջ-նական քննութիւն տալ պետական ուսումնարաններից մէկն ու մէկում՝ ուսուցչութեան իրաւունք ճեՌՔ բերելու համար, Յան-կացողները թող դիմեն խորհրդին՝ լայտնելով իրանց կամքը թէ երբ և որտեղ կը կամենան պատրաստել ու քննութիւն տալ, Խնդրատունների մ.ջ խորհուրդը գերադասելու է նրանց, որոնք աւարտած են թեմական դպրանոց կամ Գէորգեան ճե-մարանը:

Նախագահ Խորհրդի՝ Գ. Թումայչյանց

Ատենադպիր՝ Ա. Գուստավոնց

«ՄՈՐԾԻ» վրաց ամսագիրը, որպէս հաստատ հաղորդում են, ունի ներ-կայում 1000 բաժանորդ, անպէս որ նորա խմբագրութիւնը իրան ստիպւած է տեսել իւր թերթի առաջին համարը երկրորդ տպագրութեամբ լուս ընծակել Անկեղծ սրտով շնորհաւորում ենք վրաց ամսագրի այդ լազողութեան համար, իսկ հակերը թող միիթարւեն շարունակելով իրանց խելքը գովել:

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԻԻՒՐԱՄԵԱԿԻ, «ՄՈՐԾ» 1893 № 10 լուրերի մէջ հաղորդել էինք թէ Վիեննաւի «Հանդէս Ամսօրեակ» ամսա-թերթը ձեռնարկել է հաստարակելու հայ լրագրութեան հա-րիւրամեակի առիթով մի լուսանկար պատկեր. Յիշեալ թերթի խմբագրութիւնը այժմ ուղարկել է մեզ այդ պատկերի բաժա-նորդագրութեան հրաւէրը. Նկարը ներկաւացնելու է լուսատիպ (Փոտոտիպ) մի պատկեր, որի մնացութիւնն է 50×35 սանտի-մետր, տպւած 70×45 սանտիմէտր քարտոնի վրա այ և ազ-

բնագրով՝ Պատկերը պիտի ներկայացնէ՝ մէջ՝ տեղը հայ լրագրութեան հիմնադրի՝ Տէր Յարութիւն քահանաէ Շմաւոնեանի պատկերը, և բոլորտիքը 1894 թ-ին հակերէն լեզով հրատարակող բոլոր լրագրուները (օրաթերթ թէ ամսագիր) իրանց խմբագրապետների պատկերներով.

«Հանդէս Ամսօրեան» բացել է բաժանորդագրութիւն ալդ պատկերի համար. մէկ օրինակի բաժանորդագիւն է 1 ռուբլի կամ 2 ֆրանկ 50 սանտիմ:

Բաժանորդագրութեան ժամանակամիջոցի վերջին ծացը որոշած է մակար 1-ը: Պատկերը լուս պիտի տեմնի մեռնեմ-բերի 1 ին:

Խնդրանքով «Հանդէս Ամսօրեակի» խմբագրութեան՝ «Մուրճի» խմբագրութիւնը ընդունում է բաժանորդագրութիւն ալդ պատկերի համար Բաժանորդը՝ ուղարկելով մեզ մի (1) ռուբլի և իւր համցէն կստանաէ մեզնից ընկալագիր կամ նորա ազգ ու ազգանունը կը հրատարակի ակսուղ ի միա-մտութիւն:

ՄԱՆՈՒԿԻ: Բաքւում սկսեց ներկաւ լուսւարի սկզբից հրատարակել մի նոր լրագիր „Եակինսկի Գյանութիւնութիւն” և առաջիրը ունի պաշտօնական և ոչ պաշտօնական բաժիններ. Առ այժմ հրա-տարակում է շաբաթը մի անգամ:

Բաքւում սոն լուսւարից պիտի սկսէր հրատարակել նաև մի այլ լրագիր՝ „Եակինսկի Օբնավլենիա” (Բաքւի Յալտարա-րութիւններ), որի մէջ զետեղեւելու են Հիւսիսակին գործակա-լութեան հեռագիրները, տեղեկատու բաժին և լայտարարու-թիւնները. Թերթը պատկանում է Բաքվի տպարանատէր պ-ցախազովին:

Նկատելու է որ Բաքւի պէս մարդաշատ և վաճառաշահ քաղաքում հրատարակում էր միաէն մի լրագիր, ուստաց «կամպից» օրագիրը. Հակերէն թերթ չի հրատարակում:

ՆԻՒՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ: Հնդկաստանի կալկաթա քաղաքի աւագ քահ. տէր-Յոկիաննէս Խաչիկեան (տես մահացուցակ) կտակով թողետ է 30.000 անգիբական լիրա (մօտ 300.000 ռուբլի) ա. Էջմիած. Նին, Երուսաղէմին և ազգացին այլ հաստատութիւններին:

Կարսի նոր հանգուցեալ բժիշկ Շահրիար Սելիք-Փարսա-դանեանցի ալժին նօիրել է Հալոց Բարեգ, Ընկերութեանը 600 ռուբլի, դորա առկոմներով հալոց դպրոցներից մէկում մի աշա-կերտի նպաստելու համար:

Ալրի Սոփիա Ա. Գէօգէսան, վախճանւած 18 վետրւարի,

թաքւում, կտակով թողել է 1) 4000 ռ. Էջմիածնի ճեմաքա-
նին (տոկոսներով որդեգիրներ պահելու), 2) 2000 ռ. Երևանի
թեմում մի ծխական եկեղեցի կառուցանելու, 3) 500 ռ. Աստ-
րախան քաղաքի Աղարաքեան դարոցին, 4) 200 ռ. Աստրա-
խանում երկու աղքատ օրիարդների մարզու տալու, 5) 500 ռ.
Աստրախանի աղքատանոցին, 6) իւր տոնը (Բաքւում) 8000
ռուբլի արժողութեամբ՝ Բաքվի և Լուսաւորիչ եկեղեցուն:
ԹԵՄԱԿԱՆ ԴՊԲԱՆՈՅ ԱՍՏՐԱԽԱՆԻ թեմում Աստրախանի թեմը չունի
թեմական գպրանոց, Այժմ հարց է ծագել այդ մասին, և գործը
իրականացնալու վրայ է: Տարեկան ծախքը առ այժմ որոշած է
մինչ 12,000 ռուբլի: Այսկան վճռւած չէ ան թէ որ քաղա-
քում նա պիտի հիմնուի՝ Աստրախանում թէ Սոգդոկում, որը
թեմի համեմատապէս աւելի հայաշատ կենտրոնն է: Ենքն ևս
կարծում ենք որ Մոզզոկը աւելի լարմար տեղ է թեմական
դպրանոցի համար քան Աստրախանը:

ՅՈՒՈՒՏ Երևանի և Կարսի նահանգների կարօտեալն երի խմբագրու-
թեանս մէջ ստացւել է պ. պ. Յովհ, և Աբր. Բունիաթեաննե-
րից 10 ռուբլի, որ և լանձնեցինք Հայոց Բարեգործ: Ընկեր.
կենտրոնին:

ԵՒՈՒՆ ՄԱՆԿԵԼԵԱՆՅ իւր գերասան: Գետրւարի 25-ին Վաղարշապատում
սիրողների խումբը ներկայացրել է նիւէրի «Աւազակները»,
որին մասնակցել է մեր աշխատակից բանաստեղծ Պ. Լոռն
Մանուէլեանց, որ ընդանուր գրականութեան ուսուցիչ է Ճե-
մարանում: Պր. Մանուէլեանը կատարել է Ֆրանց Մօրի գերը,
որպէս վկանում են նաև ազ լրագիրների թղթակիցները՝ ար-
տակարգ լաջողութեամբ: Մեզ գրում են որ Զատկին մասպրու-
թիւն կալ «Աւազակները» ներկայացնել Երևանում, հարկաւ պ.
Մանուէլեանցի մասնակցութեամբ: Բնական է ընդհանուրի հե-
տաքրքրութիւնը պ. Մանուէլեանցին տեսնել Թիֆլսի բեմի
վրայ:

ԱՐՁԱՆ ԱԲՈՎԵԱՆԻՆ, Մեզ դիմում են հարցմունքով, թէ արդեօք ինչ
եղաւ ան գումարը, մօտ երկուհազար ռուբլի, որ հաւաքեց
«Նոր-Դար» լրագիրը Խաչառուր Արտիեանին արձան կամպնեց-
նելու և նորա գրւածները տպագրելու նպատակով: Մեր պա-
տասխանը այս է՝ քանի որ ստորագրողներ կալին, այդ լրագիրը
տպում էր նոցա անունները և ստացած գումարները: Երբ
ստորագրութիւնը դադարեց—այդ թերթը լայտարարեց թէ
ժողոված փողով ըանկի տոմսեր է գնել: Աղքանն է մեր գիտ-
ցածը:

† ՏԵՐ-ՅՈՎՀԱՆՆԵՍ ԽԱԶԻԿԵՑՆ, Կալկաթավի աւագ քահանան վախճան մեց 90 տարեկան հասակում: Հանգուցեալը, իւր անհանդիս բնաւորութեան պատճառով, Հնդկաստանի հաների մէջ մնաց լուզմունքների և երկպառակութիւնների պատճառ էր դարձել և Պարսկաստանի ու Հնդկաստանի վաղեմի թեմական առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոսի ձեռքով երկու անգամ բանագրութեց, երկրորդ անգամը ազատելով միայն չնորհիւ միջնորդութեան Ներսէս պատրիարքի, Խրիմեան Հայրիկի և Մակար կաթողիկոսի:

Հանգուցեալի գրածներից իշելու են Նոր-Ջուղավի առաջնորդների պատմութիւնը Շահ-Արասի ժամանակից սկսած մինչև Գրիգորիս եպիսկոպոսը և Թաղէոս առաջնորդի պատմութիւնը:

† ԿՈՇՈՒՏ վախճանւեց մարտի 9 ին (հին տոմար) Խտալիավի Տուրին քաղաքում, 90 տարեկան հասակում: Լուգվիդ Կոչուտ նորագոյն Ունգարիավի ստեղծողներից վլխաւորն է, թէև նորա վլխաւոր գործունէութիւնը Ընկնում է 40-ական թւականներին: Նա աղգակին հերոս էր: 1841-44 թւականներին խմբագրում էր Pestő Hirlap ունգարերէն թերթը, ուր ջերմագին պաշտպանում էր ունգարացիների ազգավն իրաւունքները: 1841-ին աւտորիական ունգարիավի համար պատգամաւոր ընտրւեց, ուր նա հանդիսացաւ պերճախօս պաշտպանը ազգային իրաւունքների և գիւղական շահերի: 1848-ին նա սկսեց պահանջել որ Աւստրիակց Ունգարիան անկախ մինիստրութիւն ունենայ: այդ միտքը իրագործւեց, և նա մտաւ այդ մինիստրութեան մէջ իւր ֆինանսների մինիստր: Բայց ունգարական այդ ինքնավարութիւնը միան առերևով էր, որովհետև Աւստրիան հիմնելով կախերութեան սլաւոնական տարրերի վրայ, աշխատում էր ի չիք դարձել ունգարացիների քաղաքական ձգտումները: Այդ ժամանակ Ունգարիայում էղագիտութիւն կատարւեց, և կոշտար ընտրւեց դիքտատոր, որը չաջողութեամբ կոււեց Աւստրիավի դէմ մինչև որ իւր շրջապատում չսկսեցին տարածակնութիւնները: Այդ րոպէից ի վեր նա սկսեց պարտութիւններ կրել և փախաւ արտասահման: Բայց այդ ամենը զուր չանցան Ունգարիավի համար: Երբ 1867 թւին Պրուսիան պատերազմեց Աւստրիավի դէմ, վերջինս չաղթեւելով՝ ստիպւած տեսաւ իրան հաշտւել Ունգարիավի ներքին քաղաքական անկախութեան մտքի հետ և տեղ Ունգարիավին մինչ այժմ գործող սահմանողութիւնը: Բայց Կոշուտին այդ բաւական չիւեց, նա մնաց

անհաշտ Աւատրիափի հետ, պահանջելով կատարեալ անկախութիւն Ռանգարիափի համար և մինչ իւր մահը մնաց աքսորւածի վիճակում, ազրելով Խոտալիափի Տուրին քաղաքում, Բաց աճքան է մեծ ռանգարական ազգի մէջ կոչուախ անունը, որ կառավարութիւնը եթէ չի էլ կարող պաշտօնապէս մասնակցել թաղման հանդէսին, սակայն չի էլ կարող արգելք լինել թաղման փառաւորութեանը:

ԷՄԻԼ ԶԱՈՒԵՅԻ: Ներկագումս Թիֆլիսումն է նշանաւոր դաշնակահար Էմիլ Զաուէյի, որը աւեց չորս ներկալացում: Զաուէյի անունը մինչ երկու տարի Ռուսաստանում գրեթէ անդաւու էր և ազգուղ նա սկսեց լաւոնի դառնալ երբ 1892 թւականին նա Պետերբուրգում հրապարակ եկաւ:

Է. Զաուէյը ծնւած է 8 հոկտ 1862 թւականին Գերմանիափի Համբուրգ քաղաքում, հետևապէս նա ավեմ 31 տարեկան է: 1876-ին Անտոն Ռուբինշտէնը ուշադրութիւն դարձնելով 14 տարեկան տղափի խաղի վրաց լանձնարարեց իւր եղբայր Նիկոլայ Ռուբինշտէնին ընդունել նորան Մոսկվափի կրնաբերատորիարում և նա մնաց Մոսկվակում մինչ 1881 թւականը: Առաջինց կրնցերուց նա աւեց իւր հայրենի Համբուրգ քաղաքում, ապա աւեց կրնցերաներ Գերմանիափի մի քանի ավ քաղաքներում, ինտու Լոնդոնում, 1883-ին կրնցերտապէն պտուտներ արաւ իսպանիայում և Խոտալիայում: 1884-ին եղաւ Վէլմարումուր նրանով խիստ հետաքրքրւեց այժմ հանգուցեալ հոչակառոր Ֆրանց Լիստը, որի մի քանի օգտակար ցուցմունքները նա իւրացրեց: 1885-ին Զաուէյ խաղաց Բերլինի «Նրաժշտական ակադեմիափի» դաշտում, որից և սկսեց նորա հոչակը Եւրոպական:

Զաուէյի խաղը իւր վրաք խակոն ռաշադրութիւն է դարձ: Նում իւր կատարելութիւնով, Դաշնակահարը՝ գիտէ շատ բազմատեսակ տուչէներով արտադրել ձանսալին բազմաթիւ գովներ, որոնցով նորա խաղը ստանում է առանձին իմն հետաքրքրական բնաւորութիւն: Շնորհիւ ամենակատարեալ տեխնիկափի, որը ոչ մի գժւարութիւն չի ճանաչում, խաղի կատարումը զարմանալի փալուն է: Սակայն վիրտուոզի ամենաուժեղ կողմը կազմում է ոչ թէ խորը զգացմունքը, ավ արտակարգ վարպետութիւնը, որի չնորհիւ լսողը մեծ հետաքրքրութեամբ հետեւում է արտակարգութեան ամեն մի տակտին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ Խետաձեցեցինք դաւ անգամին:

ՎՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ» № 1-ում:

Ղազբէգի՝ «Զորի նահապետ Գոչա» վէպում, Էջ 17, տող 4
տպւած է հողի, ուղիղն է ձի չնի. Էջ 41, տող 17 տպւած է
ուղիղ, պէտք է լինի ուղեղ. Էջ 42, տող 5 ներքեից տպւած
է ջողում, ուղիղն է յաջողւում.

Ղարաբաղի թեմական դպրանոցի մասին օգւածում մի
տեղ տպւած է 4892—93, ուղիղն է 1892—93. մի այլ տեղ, Էջ
144, 4-դ տող ներքեից տպւած է 1882—93, ուղիղն է 1892
—93 թ..

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐԱԲԵՐ

- 1) ԹԱՏՐՈՒՆ, գրական և թատերական հանդէս, № 1, հրատարակիչ Աղէք-
սանդր Թարխանեան, Թիֆլիս, տպար. Մարտիրոսեանցի և
Ընկ., 1893 թ., գինն է 2 ռուբլի.
- 2) ՓԻՐԲՈՒԴՈՎԱՆՑԱՆՑ, Էմ.—«Մի քանի խորհրդածութիւններ (ոստանա-
ւորներ): Բաքու, տպ. «Արօր», 1894 թ., գինն է 20 կոպ.:
- 3) ՔՈՒԶԱՐԵԱՆՑ, Գրիգոր.—«Մեղապարտ փարիսեցիներ» (գրամատիքա-
կան անցքեր հինգ պատկերով): Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրո-
սեանցի, 1894 թ., գինն է 20 կոպէկ:
- 4) ՆՈՅՆԸ.—«Միթթարանք և Հանգիստ, չափաբերական դրւածքներ»
Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1894 թ., գինն է 30 կոպ.:
- 5) ՏԵՐ-ՄԵԼՔԻՍԵԴԵԿԱՆՑ, Սարիբէկ. —«Տիրացու Մարկոս», վէպիկ Շի-
րակաէ կեանքից: Ալեքսանդրապու տպ. Արք. Մալիսասևանցի,
1893 թ., գինն է 25 կոպէկ:

Խմբագիր հրատարակիչ՝ Ա.ԻԵՏԻՔ Ա.ՐԱՄԽԱՆՅԱՆՑ

